

## ԻՇԱՌՎՈՒՅՏԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

**Ս. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*Գյուղ. գիտ. թեկնածու, դոցենտ*

**Յ. Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

*Գյուղ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Անասնաբուծության կերի բազան ամրապնդելու, լքված, քարքարոտ, էրոզացված, անջրդի հողերը մշակության ոլորտ վերադարձնելու համալիրում կարևորվում է բազմամյա բակլազգի խոտաբույսերի՝ կորնզանի և իշառվույտի մշանակությունը: Բազմամյա բակլազգի խոտաբույսերը տալիս են սպիտակուցներով, հանքային նյութերով և վիտամիններով հարուստ կանաչ կեր, խոտ, օգտագործվում են խոտալյուր, սենած և սիլոս պատրաստելու համար: Դրանք հողը հարստացնում են ազոտով, լավացնում հողի կառուցվածքային և ֆիզիկական հատկությունները (3):

Իշառվույտը բերքատու մշակաբույս է, մեկ հեկտարից 50-60 g խոտ է ապահովում, տալիս է չափազանց մեծ սիլոսային զանգված, օգտագործվում է որպես արոտ: Իշառվույտը աճման արագ տեմպ ունի, չորադիմացկուն և ցրտադիմացկուն է, աճում է նաև աղուտ հողերում, մեղրատու բույս է: Մնացած բակլազգի խոտաբույսերի համեմատ վնասատուներից, հիվանդություններից և մակաբույծ գաղձից ավելի քիչ է տուժում (4):

Վայրի վիճակում տարածված են իշառվույտի 12 տեսակներ, որոնցից կարևոր մշանակություն ունեն միայն սպիտակ և դեղին տեսակները: Երկու տեսակներն էլ երկամյա են, իրարից տարբերվում են ծաղկի գույնով, պտղի մակերեսի բնույթով, բույսերի բարձրությամբ, վեգետացիայի տևողությամբ, բերքատվությամբ և խոտի որակով: Այս հարցերը Հայաստանի Հանրապետությունում գրեթե ուսումնասիրված չեն, որին և նվիրված է այս աշխատանքը:

Գրականության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ իշառվույտի մշակության արդյունավետությունը մեծ է անջրդի, չոր, քարքարոտ և լքված հողակտորներում (1):

Իշառվույտի սպիտակ և դեղին տեսակների ուսումնասիրությունները կատարվել են Գեղարքունիքի մարզի Ծովակ համայնքի պայմաններում, ծովի մակերևույթից 1850 մ բարձրության վրա գտնվող քարքարոտ և լքված, սննդանյութերով աղքատ հողակտորում: Տեղումների տարեկան միջինը՝ 450-500 մմ, միջին ջերմաստիճանը՝ 4,2-5,0°C:

Փորձերի ցանքը կատարվել է վաղ գարնանը, կրկնողությունը՝ 4, փորձամարզը՝ 50 մ<sup>2</sup>, ցանքի նորման՝ 8 մլն սերմ, ցանքի խորությունը՝ 1-2 սմ: Վեգետացիայի ընթացքում կատարվել են ֆենոլոգիական դիտումներ և կենսամետրիկ չափումներ: Կանաչ զանգվածի և խոտի բերքատվությունը հաշվարկվել է ընդունված մեթոդով:

Մեր ուսումնասիրություններով պարզվել է, որ կենսամետրիկ մի քանի չա-

փունների և բերքատվության ցուցանիշներով իշառվույտի տեսակները միմյանցից էականորեն տարբերվում են (աղյուսակ): Այսպես, սերմերի դաշտային ծլունակությունը, ցողունակալունը, տերևայնությունը, խոտի ուտելիության աստիճանը բարձր է իշառվույտի սպիտակ տեսակի մոտ, իսկ ցողունածածկի բարձրությամբ, առանցքային արմատի խորանալու սահմանով և բերքատվությամբ առավելություն ունի դեղին տեսակը:

**Աղյուսակ**

**Իշառվույտի կենսամետրիկ ձևաչափումների արդյունքները և բերքատվությունը**

Ցուցանիշները	Տեսակները	
	սպիտակ Melilotus albus	դեղին Melilotus officinalis
Դաշտային ծլունակությունը	51.2	48.3
Ցողունների թիվը, հատ/բույս	4.5	4.0
Ցողունածածկի բարձրությունը, սմ	57	60
Առանցքային արմատի խորությունը, սմ	86	91
Բերքատվությունը երկրորդ տարում, ց/հա	152	166
- կանաչ զանգված	35.2	38.5
- օղաչոր զանգված		
Տերևայնությունը, %	40.9	9.2
Ուտելիության աստիճանը, բալ	4	2
Վեգետացիայի տևողությունը, օր	130	135

Ուշադրության են արժանի բերքատվության, տերևայնության և ուտելիության աստիճանի տվյալները: Թեև կանաչ և օղաչոր զանգվածի բերքը (համապատասխանաբար 166 և 38,5 ց/հա) բարձր է իշառվույտի դեղին տեսակի մոտ, սակայն տերևայնությամբ (40,9%) և հատկապես ուտելիության աստիճանով (4 բալ) ավելի արժեքավոր է իշառվույտի սպիտակ տեսակը: Փաստորեն դեղին իշառվույտի բերքը ուտելիությամբ կրկնակի անգամ զիջում է սպիտակ տեսակի ցուցանիշը: Մեր կարծիքով և այլ ուսումնասիրողների արդյունքներով (2) դրա պատճառը դեղին իշառվույտի մեջ կունարինի բարձր պարունակությունն է, որը դառնում է հաղորդում և կանաչ զանգվածին, և խոտին:

Իշառվույտը երկրորդ տարում հնձվում է երկու անգամ: Վեգետացիան ավելի շուտ` 130 օրում ավարտում է իշառվույտի սպիտակ տեսակը:

**Եզրակացություն**

Գեղարքունիքի մարզի անջրդի, չոր, քարքարոտ, սննդանյութերով աղքատ

հողերում արդյունավետ է մշակել սպիտակ իշառվույտ, որը տալիս է 152 g/ha կանաչ զանգվածի կամ 35,2 g/ha խոտի բերք, ապահովում է 4 բալ գնահատվող ուտելիություն և 40,9% տերևալիություն:

#### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Անդրեև Ն. Գ., Սարգսզետնաբուծություն, Երևան, 1985
2. Թովմասյան Ա. Ա., Դաշտային կերարտադրություն, Երևան, 1978
3. Մաթևոսյան Ա. Ա., Գյուլխասյան Մ. Ա., Բուսաբուծություն, Երևան, 2000
4. Савин А. П., Донник белый в зерновом севообороте. Ж., Земледелие, N 5, 2009

#### **ИЗУЧЕНИЕ ВОПРОСОВ ВОЗДЕЛЫВАНИЯ ДОННИКА В ГЕГАРКУНИКСКОМ МАРЗЕ**

***С. М. ГРИГОРЯН  
Г. С. МАРТИРОСЯН***

В засушливых, каменистых и бедных питательными веществами почвах Гегаркуникского марза продуктивно возделывать донник белый. При этом получается 152 ц/га зеленой массы или 35.2 ц/га сена с 4-х бальной поедаемостью и 40.9 %-ой облиственностью.

#### **ISSUES OF MELILOT CULTIVATION IN GEGHARKUNIK MARZ**

***S. M. GRIGORYAN  
G. S. MARTIROSYAN***

In the arid, rocky and nutrient-poor soils of Gegharkunik Marz it is productively to cultivate white melilot. This gives 152 centner per ha of green mass, or 35.2 centner per ha of hay with a 4-point scale eating rate and 40.9% foliage.

#### **К ИСТОРИИ ЭФИРО-МАСЛИЧНОГО ПРОИЗВОДСТВА В КАХЕТИИ**

***Т. ТАМАРАШВИЛИ***  
*Докторант Телавского государственного университета  
имени Я. Гогебашвили*

Человечество испокон веков пользовалось эфиромасличным продуктом. В истории народов мира ещё с четвёртого века арабы знали эфирные масла и средства их получения, но до XVIII века методы изготовления масла были примитивными.